ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵՄ. ԼՈՒՐԵՐ

Ապրիլի 1-ին, չորեքշաբթի.—Այսօր Վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, տեղի ունեցավ միաբանական հերթական հավաքույթ:

* * *

Ապրիլի 4-ին, շաբաթ.—Տօն է Սրբոյն Գրիգորի Լուսաւորչին մերոյ սոսկալի չարչարանացն և մտին ի Վիրապն:

Այսօր Մայր տաճարում, Իջման ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Խաչատուր ավ. քհն. Ֆրանկյանը:

* * *

Ապրիլի 5-ին, կիրակի.—Գալատեաց:

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Միքայել վրդ. Աջապահյանը: «Հայր մեր»-ից առաջ հավուր պատշաճի քարոզ խոսեց Տ. Արտակ ավ. քհն. Սիմոնյանը:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

* * *

Ապրիլի 7-ին, երեքշաբթի.—Աւետումն Ս. Աստուածածնի:

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Արտակ ավ. քհն. Սիմոնյանը:

* * *

Ապրիլի 8-ին, չորեքշաբթի.—Այսօր Վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, տեղի ունեցավ միաբանական հերթական հավաքույթ:

* * *

Ապրիլի 10-ին, ուրբաթ.—Այսօր Վեհարանի հանդիսությունների դահլիճում, Վեհափառ Հայրապետի բարձր նախագահությամբ, տեղի ունեցավ

հոգևորականաց հավաքույթ, որի ժամանակ Ճիրակի թեմի առաջնորդ գերշ. Տ. Գրիգորիս եպս. Բունիաթյանը ներկաներին խոսեց Հայաստանի տարածքում գործող աղանդավորական համայնքների մասին: Ապա Վեհափառ Հայրապետը, խոսք առնելով, անդրադարձավ աղանդավորների քայքայիչ գործողություններին և կոչ արեց հոգևոր հայրերին՝ բոլոր միջոցներով պայքարել նրանց դեմ:

* * *

Ապրիլի 12-ին, կիրակի.—Ծաղկազարդ:

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Միքայել վրդ. Աջապահյանը: «Հայր մեր»-ից առաջ բովանդակալից քարոզ խոսեց Մայր Աթոռի դիվանապետ գերշ. Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանը:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

* * *

Ապրիլի 16-ին, հինգշաբթի.—Ավագ հինգշաբթի: Յիշատակ ընթրեաց Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի:

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Խորեն քհն. Մարուքյանը:

* * *

Ապրիլի 20-ին, երկուշաբթի.—Յիշատակ մեռելոց:

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Եղիշե ավ. քհն. Բաղրամյանը: Հավարտ պատարագի կատարվեց հոգեհանգստյան հանդիսավոր պաշտոն՝ «վասն համօրէն ննջեցելոց»:

* * *

Ապրիլի 26-ին, կիրակի.—Կրկնազատիկ (Նոր Կիրակէ):

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Մակար քհն. Տերտերյանը: «Հայր մեր»-ից առաջ հավուր պատշաճի քարոզ խոսեց Ամենայն Հայոց Հայրապետը:

* * *

Մայիսի 3-ին, կիրակի.—Աշխարհամատրան (Կանաչ Կիրակէ):

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. խորանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Կոմիտաս քհն. Հարությունյանը: «Հայր մեր»-ից առաջ օրվա խորհրդի մասին քարոզ խոսեց ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող Իրանի հայոց թեմի առաջնորդ գերշ. Տ. Արտակ արքեպս. Մանուկյանը:

* * *

Մայիսի 6-ին, չորեքշաբթի.—Այսօր Վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, տեղի ունեցավ միաբանական հերթական հավաքույթ:

* * *

Մայիսի 10-ին, կիրակի.—Կարմիր Կիրակէ:

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող Երուսաղեմի հայոց Պատրիարք Ամենապատիվ Տ. Թորգոմ արքեպս. Մանուկյանը և «Հայր մեր»-ից առաջ բովանդակալից քարոզ խոսեց:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

* * *

Մայիսի 17-ին, կիրակի.—Տօն երևման Ս. Խաչի:

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. խորանի վրա, ս. պատարագ մատուցեց ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող Բրազիլիայի հայոց թեմի առաջնորդ գերշ. Տ. Տաթև եպս. Ղարիպյանը: «Հայր մեր»-ից առաջ ոգեշունչ քարոզ խոսեց ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող Մեծի Տանն Կիլիկիո Տ. Տ. Գարեգին Բ Կաթողիկոսը (տես էջ 6):

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

* * *

Մայիսի 22-ին, ուրբաթ.—Յիշատակ աշխարհազօրաց և զօրավարացն հայոց, որք կատարեցան ի հերոսամարտին Սարդարապատի 1918 ամի, վասն հաւատոյ և հայրենեաց:

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Խաչատուր ավ. քհն. Ֆրանկյանը:

* * *

Մայիսի 24-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող Հունաստանի հայոց թեմի առաջնորդ գերշ. Տ. Ոսկան եպս. Գալփաքյանը և «Հայր մեր»-ից առաջ հավուր պատշաճի քարոզ խոսեց:

Հավարտ ս. պատարագի կատարվեց հոգեհանգստյան հանդիսավոր պաշտոն՝ Սարդարապատի հերոսամարտում ընկած հայ մարտիկների հիշատակին:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

* * *

Մայիսի 28-ին, Հինգշաբթի.—Համբարձումն Քրիստոսի: Յիշատակ փոխադրութեան Հայրապետական Աթոռոյն Հայոց ի Սսոյ ի Ս. Էջմիածին, յամի Տեառն 1441: Ոգեկոչումն հոչակման Հայաստանի Հանրապետութեան 1918 թ.:

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, օրվա մեծ տոնի առթիվ, ս. պատարագ մատուցեց Տ. Վազգեն աբդ. Միրզախանյանը և «Հայր մեր»-ից առաջ հավուր պատշաճի քարոզ խոսեց:

Հավարտ ս. պատարագի կատարվեց գոհաբանական մաղթանք:

* * *

Մայիսի 31-ին, կիրակի.—Երկրորդ Ծաղկազարդ:

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. խորանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Խորեն քհն. Մարուքյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց: